ԱԱԻ Առողջապահության ԼՐԱՏՈՒ

Առողջապահության ազգային ինստիտուտ

ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒՄ COVID-19-Ի ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՒՄ

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՒՄ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Մանրամասները՝ nih.am/am և moh.am/#1/3083 կայքերում

Հայաստանում COVID-19-ի դեմ պայքարում ՀՀ ԱՆ Առողջապահության ազգային ինստիտուտը, կարելի է ասել, հենց սկզբից եղել է առաջատար դիրքերում: Հիվանդության նոր և չուսումնասիրված լինելու պատճառով անհրաժեշտ էր արագ և համապարփակ ուսումնասիրել հիվանդությանն առնչվող առկա նյութերը, միջազգային փորձը և տեղեկատվությունը հնարավորինս հասանելի դարձնել մեր բուժաշխատողների համար: Եվ ԱԱԻ-ում մեկնարկեց դասընթացների, միջազգային և տեղական վեբինարների շարքը՝ համագործակցելով համաշխարհային առաջատար բժշկական կենտրոնների և բժիշկների հետ:

1 ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ

Նոր կորոնավիրուս. հիմնական տեղեկատվություն բժիշկների համար

Դասընթացի շրջանակում ներկայացվել են COVID-19-ի պատճառագիտության, համաճարակաբանության, ախտորոշման, բուժման վերաբերյալ թեմաները:

ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ՇՈՒՐՋ 970 ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂ

Նոր կորոնավիրուսի կանխարգելում և վերահսկողություն

Դասընթացի շրջանակում ներկայացվել են հիվանդների մեկուսացման, անհատական պաշտպանիչ միջոցների օգտագործման, ձեռքերի հիգիենայի, ախտահանման, բժշկական թափոնների կառավարման վերաբերյալ թեմաները:

ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ՇՈՒՐՋ 2700 ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂ

Նոր կորոնավիրուսային վարակի նմուշառման տեխնիկա

Դասընթացները կազմակերպվել են ՀՎԿԱԿ-ի հետ համատեղ և անցկացվել են ԱԱԻ-ում, մարզային բուժհաստատություններում և ՀՎԿԱԿ-ի մարզային ստորաբաժանումներում:

ՄԱՍՆԱԿՑԵԼ Է ՇՈՒՐՋ 290 ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂ

Նոր կորոնավիրուսային վարակի վերաբերյալ դասընթացներ՝ պոլիկլինիկաների, բուժական ամբուլատորիաների և առողջության կենտրոնների վարչակազմի և բուժանձնակազմի համար:

Նեղ մասնագիտական ուսումնական դասընթացներ այն մասնագետների համար, ովքեր աշխատանքի էին անցնելու կորոնավիրուսային հիվանդության կասկածով և հաստատված պացիենտներին սպասարկում ապահովող բուժկենտրոններում:

Մանկապարտեզներում և մանկական կենտրոններում COVID-19-ի կանխարգելման և վերահսկման թեմաներով դասընթացներ:

2 ՆԵՂ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՎԵԲԻՆԱՐՆԵՐԻ ՇԱՐՔ

Հայկական բժշկական միջազգային կոմիտեի և Սփյուռքի գլխավոր հանձնակատարի գրասենյակի հետ համագործակցության շրջանակներում իրականացվել է նոր կորոնավիրուսային վարակի կանխարգելմանն ու բուժմանն ուղղված նեղ մասնագիտական առցանց քննարկումների շարք՝ սփյուռքի ներկայացուցիչների հետ, որոնց նպատակն էր բարձրացնել բուժաշխատողների մասնագիտական պատրաստվածությունը և ներկայացնել միջազգային փորձը:

ՎԵԲԻՆԱՐՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է 2800-ԻՑ ԱՎԵԼԻ ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂ

- Կրիտիկական խնամքը նոր կորոնավիրուսային վարակի պայմաններում
- COVID-19-ը և վարակիչ հիվանդություններ
- COVID-19-ը և ռադիոլոգիա
- COVID-19-ը և մանկաբարձություն
- COVID-19-ը և բուժքույրական խնամք
- COVID-19-ը և նմուշառում
- COVID-19-ը և մանկաբուժություն
- COVID-19-ը և արտակարգ իրավիճակներում բուժօգնություն
- COVID-19-ը և սրտանոթային հիվանդություններ
- COVID-19-ը և անեսթեզիոլոգիա
- Բժշկական կրթությունը COVID-19-ի համավարակի ժամանակ
- COVID-19-ը և շաքարային դիաբետ
- COVID-19-ը և նյարդաբանություն
- COVID-19-ը և վերակենդանացման բաժանմունքում բուժքույրերի դերը
- Ծերերի խնամքը կորոնավիրուսային վարակի պայմաններում
- Բուժքույրական խնամքը կորոնավիրուսային վարակի պայմաններում
- COVID-19-ը և ՊՇՌ թեստավորում
- COVID-19-ը և շաքարային դիաբետով պացիենտների բուժքույրական խնամքը
- COVID-19-ը և սուր շնչական դիսթրես համախտանիշ
- Լիտվացի գործընկերների փորձի փոխանակում
- Ֆրանսիացի գործընկերների փորձի փոխանակում
- Թոքերի ճառագայթային ախտորոշում ՀՇ միջոցով COVID-19-ի դեպքում
- Թոքաբորբի բուժումը կորոնավիրուսային վարակ ունեցող և չունեցող պացիենտների համար
- Ուլտրաձայնային հետազոտությունը և COVID-19-ի հետևանքները սրտանոթային համակարգի վրա, բուժքույրական խնամք
- COVID-19-ով հիվանդների համար բուժքույրերի գնահատում
- Կրծքավանդակի CT սկանավորում՝ COVID-19-ով հիվանդների դեպքում

ԱԱԻ Առողջապահության ԼՐԱՏՈՒ

Առողջապահության ազգային ինստիտուտ

ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒՄ COVID-19-Ի ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՒՄ

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՒՄ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Մանրամասները՝ nih.am/am և moh.am/#1/3083 կայքերում

3 ՆԵՂ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ՏԵՂԱԿԱՆ ՎԵԲԻՆԱՐՆԵՐԻ ՇԱՐՔ

ՎԵԲԻՆԱՐՆԵՐԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼ Է 1700-ԻՑ ԱՎԵԼԻ ՄԱՍՆԱԳԵՏ

- COVID-19-ը և շաքարային դիաբետ
- COVID-19-ը և մանկաբուժական խնամք
- COVID-19-ը և ակնաբուժություն
- COVID-19-ը և սնուցում
- COVID-19-ը և մանկաբարձություն և նեոնատոլոգիա
- COVID-19-ը և ռևմատոլոգիա
- COVID-19-ը և Կավասակիի հիվանդությունը
- COVID-19-ը և երեխաները
- COVID-19-ը և պալիատիվ խնամքը
- COVID-19-ը և մանկական խնամքը
- COVID-19 հիվանդության կանխարգելումը և վերահսկումը հիվանդանոցային պայմաններում
- COVID-19-ը և հոգեկան առողջությունը

4 ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԲԱԶԱՅԻ ՍՏԵՂԾՈՒՄ

ԱԱԻ-ի աջակցությամբ ստեղծվել է բուժաշխատողների տեղեկատվական բազա, որի հիման վրա ընտրվել են կամավորներ (ցանկում ընդգրկվել են նաև ԱԱԻ-ի կլինիկական օրդինատորները): ԱԱԻ-ի կողմից իրականացվել և համակարգվել է ընտրված կամավորների աշխատանքը կորոնավիրուսային հիվանդության կասկածով և հաստատված պացիենտներին սպասարկում իրականացնող բուժկենտրոններում:

5 ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՐԹԱԿԻ ՄՇԱԿՈՒՄ

ԱԱԻ-ի կողմից մշակվել է նոր կորոնավիրուսային վարակի վերաբերյալ տեղեկատվական հարթակ, որը հասանելի է հետևյալ հղումով՝

http://nih.am/am/home/corona

Հարթակում տեղադրված են ՀՀ նախարարի հրամանները, ԱՀԿ-ի հանձնարարականները նոր կորոնավիրուսային վարակի (COVID-19) տարածման վերաբերյալ, տեսադասընթացներ, իրազեկման տեսահոլովակներ, պաստառների օրինակներ, այլ նյութեր:

6 ՀԻՎԱՆԴԱՆՈՑՆԵՐԻ ԵՎ ՀՅՈՒՐԱՆՈՑՆԵՐԻ ՎԵՐԱՊՐՈՖԻԼԱՎՈՐՈՒՄ

ԱԱԻ-ն իրականացրել է ՀՀ ոստիկանության բուժվարչության հոսպիտալի վերապրոֆիլավորում, որտեղ բուժում են ստանում կորոնավիրուսային վարակ ունեցող անձինք: Միևնույն ժամանակ, ԱԱԻ-ը պատասխանատվություն է ստանձնել համակարգել մեկուսացված կոնտակտավորների հետ տարվող աշխատանքները («Մինհոթել» և «Ավիատրանս» հյուրանոցներում):

7 ԻՐԱԶԵԿՄԱՆ ՆՅՈՒԹԵՐ

Նոր կորոնավիրուսային վարակի դեմ արդյունավետ պայքար մղելու համար ԱԱԻ-ի կողմից մշակվել են իրազեկման պաստառներ և տեսահոլովակներ:

- Ձեռքերի հիգիենայի պահպանման կանոնները հիվանդասենյակում հիվանդի հետ աշխատելիս
- Ախտահանել ձեռքերը
- Ձեռքերի ախտահանման կանոններն ալկոգելով և լվացվելու ժամանակ. նախատեսված հիվանդանոցների, պոլիկլինիկաների և սննդի կետերի համար
- Ձեռնոցների կիրառման կանոնները
- Անհատական պաշտպանիչ միջոցների օգտագործման կանոնները. պաշտպանական հագուստը հագնելու և հանելու վերաբերյալ
- Սոցիալական հեռավորություն
- Աշխատանքի կազմակերպումն արտադրամասերում

ԱԱԻ Առողջապահության ԼՐԱՏՈՒ

Առողջապահության ազգային ինստիտուտ

ԱՌԱՆՑՔԱՅԻՆ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒՄ COVID-19-Ի ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՒՄ

ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՒՄ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԻՐԱԿԱՆԱՑՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ

Մանրամասները՝ nih.am/am և moh.am/#1/3083 կայքերում

Հանրային իրազեկման բարձրացման նպատակով մշակվել է **9** տեսահոլովակ, որոնցում մանրամասն ներկայացված է տարբեր իրավիճակներում անվտանգության կանոնների պահպանությունը

- Մեծածախ և մանրածախ առևտրի կենտրոններում անվտանգության կանոններ
- Ուղևորատար տրանսպորտային միջոցների աշխատանքի կազմակերպման անվտանգության կանոններ
- Հանրային սննդի օբյեկտներում անվտանգության կանոններ
- Վարսավիրանոցների և գեղեցկության սրահների ծառայությունների կազմակերպման անվտանգության կանոններ
- Նոր կորոնավիրուսի կանխարգելման նպատակով ախտահանիչ միջոցներ
- Շինարարական հրապարակներում աշխատանքների կազմակերպման անվտանգության կանոններ
- Գրասենյակային աշխատանքի ընթացքում կորոնավիրուսային հիվանդության տարածման կանխարգելմանն ուղղված անվտանգության կանոններ
- Հիվանդանոցային, առաջնային բժշկական օգնության և սպասարկման, շտապ բժշկական օգնության ծառայություններում կորոնավիրուսային հիվանդության տարածման կանխագելմանն ուղղված անվտանգության կանոններ
- Փակ արտադրական տարածքում տնտեսական գործունեություն ծավալելու ընթացքում կորոնավիրուսային հիվանդության տարածման կանխագելմանն ուղղված անվտանգության կանոններ:

ԱԱԻ-ի կողմից թարգմանվել և տեղայնացվել են մի շարք տեսանյութեր և տեսադասընթացներ՝ ուղղված բուժանձնակազմի իրազեկման մակարդակի բարձրացմանը: Տեղեկատվական նյութերը հասանելի են կորոնավիրուսային հիվանդության վերաբերյալ տեղեկատվական հարթակում.

http://nih.am/am/home/corona

8 ՈՒՂԵՑՈՒՅՑԻ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ

Թարգմանվել է Հարվարդի երկրորդ խոշոր կլինիկական հիվանդանոցի՝ Brigham and Womens Hospital (BWH)-ի ուղեցույցը՝ 21 բաժիններով, որոնցում ներառված են ինչպես նոր կորոնավիրուսային հիվանդության կլինիկական ընթացքի, ախտորոշման և բուժման վերաբերյալ տեղեկատվությունը, այնպես էլ նեղ մասնագիտական ոլորտներից տվյալներ:

9 ՏԵՂԱԿԱՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՆԵՐԻ ՀԵՏ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ԱԱԻ-ը և Բժշկական կամավոր միությունը ընդդեմ COVID-19-ի համագործակցության շրջանակներում ստեղծվել է բուժաշխատողների համար հարթակ, որտեղ ներկայացված են COVID-19-ի վերաբերյալ միջազգային ուղեցույցները (հայերեն թարգմանությամբ):



covidprotocols.am

ԱԱԻ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԱԼՅԱՆՍ ԿՈՎԻԴ 19

ԱՄԵՆ ԻՆՉ ԿՈՐՈՆԱՎԻՐՈՒՍԻ ՄԱՍԻՆ

Տեղեկատվություն բուժաշխատողների համար

ԱԱԻ Առողջապահության ԼՐԱՏՈՒ

COVID-19
ՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ
Օգոստոսի **31**-ի դրությամբ

31 ՆՈՐ ԴԵՊՔ

2 ՆՈՐ ՄԱՀ

43781 ՀԱՍՏԱՏՎԱԾ ԴԵՊՔ

205940 ԱՆՑԿԱՑՎԱԾ ԹԵՍՏ

4912 ԲՈՒԺՎՈՂ ԱՆՁ

37722 ԱՊԱՔԻՆՎԱԾ ԱՆՁ

879 ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՀԵՐԻ ԹԻՎԸ

ՕՊԵՐԱՏԻՎ ՋԱՆԳԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ 060 83 83 00 -24/7

ԱԱԻ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Լրատվական գործունեությունն իրականացնում է **«Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ**:Վկայական թիվ 01Ա 016493, տրված 07.09.1995թ.:
Հղումը «Առողջապահության Լրատու»-ին պարտադիր է:
Մեր հասցեն է՝ 0051, Երևան,Կոմիտասի պողոտա 49/4 Հեռ.՝+374 10 23 90 38

Հասարակայնության հետ կապերի բաժնի ղեկավար **Լուսինե Հովհաննիսյան**
Խմբագիրներ՝ **Մարո Գաբրիելյան**, **Նարինե Ավետիսյան**
Համակարգչային ձևավորումը՝ **Անդրեյ Աստվածատրյանի**